


1447

Khudap Zakh



Phschu.  
1897

245

112

83 - 3

Հ - 3 96 սոր ՄԱՑԵԿԱԴՐԱՆ

թ.

# ԶԲՐՅՈՒԹՔ ՅԵԿՈԲ

Հ Օ Ֆ Մ Ա Ն Ի

Գերմաներկնից թարգմ.

Յիրուհի կոստանեանց.



Թ Ի Գ Լ Ի Ս

Տպարան Մ. Շարաձելի, Նիկ. 21

1897

2011

ՀՀ 70 03

83-3

2-96 47

## ԵՐՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

2. 2



# ԶԻՒՈՒՈՔ ՅԱԿՈԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ



## Գեղասահմանական թարգմանություն

## Տիրութիւն կոստանեանց



ԹԻԳԼԻՄ

Յպարան Մ. Չարաձե, Նիկոլ. փ. ա. 21

1897

ԶԻՆՈՒՈՐ ՅԱԿՈԲ

Այդպէս էին անուանում ենթասպալի առողջ, ուրախ և աշխոյժ տղային, նորան այդպէս էին ասում նախ նորա համար, որ նազինուորի որդի էր, երկրորդ, որ ինքը շատ էր սիրում նմանել զինուորի և երրորդ, որ նորա անունը Յակոբ էր: Յակոբը յայտնի էր ամբողջ քաղաքում և բոլորին չէր նեղանում, երբ նորան անուանում էին «զինուոր Յակոբ», այլ ընդհակառակն այդ նորան շատ էր գուրգալիս, որովհետեւ նա հոգով իսկական զինուորի որդի էր:

Յակոբը տասներեք տարեկան էր, երբ պատերազմ սկսուեց հարեւան տէրութեան հետ և պրուսական զօրքն ու այն գունդը, որտեղ ծառայում էր Յակոբի հայրը, պէտք է ուղևորուէին դէպի Ուէնոս: Հայրը մնաս բարեւ ըւեց իւր կնոջ հետ, Յակոբին խրատեց, որ լսէ մօրն ու աշխատասէր լինի և գնաց պատերազմ: Թէև Յակոբը շատ էր ուզում նորա

Дозволено цензурою Тифлисъ, 8-го Мая  
1897 г.

Հետ գնալ, բայց հայրը թոյլ չտուեց, որովհետև նա դեռ շատ փոքր էր պատերազմի համար:

Արդէն կէս տարի էր անցել, բայց ենթասպալի ընտանիքը ոչ մի տեղեկութիւն չունէր նորանից: Վերջապէս նամակ ստացուեց, որը լիքն էր ուրախ լուրերով և որտեղ գըրուած էր, որ ինքն այժմ աւագ զինուրի աստիճան է ստացել:

— «Բայց դորանից ինչ օգուտ»: շարունակում էր նա իւր նամակի մէջ: «Միայն մէկ փառքով մարդ չի կշտանայ. իսկ այստեղ ուրիշ ոչինչ չի կարելի ճարել: — Ա՛խ, եթէ միայն այստեղ գտնուէր մեր լաւ գետնախնձորը. այս հիանալի բան է: Այստեղ Ունոսի վերայ երբեմն երեք օրով քաղցած ենք մնում. իսկ այն օրից, ինչպէս ես հեռացել եմ մեր տանից, դեռ մի լաւ, համով գետնախնձոր (կարտօֆիլ) չեմ տեսել:»

Նամակի ալդ վերջին տողերն այնպիսի խիստ տպաւորութիւն թողին Յակոբի վերայ, որ նա մոռացաւ ուրախանալ հօր նոր, աւելի բարձր պաշտօն ստանալու համար: Նորան հանգիստ չէր տալիս այն միտքը, որ հայրը գետնախնձոր չի գտնում և քաղցած է մնում, այն ինչ իրանց մառանը լիքն է գետնախըն-

ձորի ամենալաւ տեսակներով: Եւ Յակոբը գըլուխը կոտրում էր՝ թէ ինչպէս օգնէ ալդ ցաւին և հօրը մի քիչ գետնախնձոր հասցնէ:

— «Մայրիկ» ասաց նա. «ինձ մի տոպրակ տուր, ես հայրիկիս գետնախնձոր կըտանեմ»:

— «Որդիս, երկի խելքդ գլուխդ չէ» պատասխանեց նորան մայրը ծիծաղելով: «Դու հանա՞ք ես կարծում, մի քանի հարիւր վերստանցնել ծանր տոպրակն ուսերիդ. գլխիցդ հանիր այդ միտքը, փոքրիկ ծաղրածու»:

Նեշտ է ասելը, բայց կատարելը գժուարէ: Յակոբը ոչ մի կերպ չէր կարող մոռանալ գետնախնձորի մասին: Որտեղ էլ որ նա լինէր, ինչ որ էլ որ նա անէր, ամեն տեղ ու միշտ նորա առաջ պատկերանում էր իւր հօր դէմքը, որը տխուր ու տրտում լիշում է հայրենի գետնախնձորը: Մինչև անգամ նա գիշերները հանգիստ չունէր և շատ անգամ անկողնից վեր էր թռչում և քնի մէջ կանչում էր՝ «Հայրիկ ջան, հայրիկ, դու պէտք է անպատճառ գետնախնձոր ստանաս»:

Այդ նամակից յետոյ անցել էր երկուերեք շաբաթ և մայրը չէր կարող իւր զարմանքը ծածկել, որ որդին շարունակ, գիշերցերեկ գետնախնձորի մասին մտածելով, գունատուել ու նիհարել էր. թէև նա դեռ հա-

ւատում էր, որ Յակոբը վերջապէս գըլից կըհանէ այդ լիմարութիւնը: Բայց մէկ առաւօտ, ամառուայ վերջերին, երբ մայրը մտաւ Յակոբի սենեակը, որ նորան գարթեցնի ու գործի ուղարկէ, տեսաւ որ նորա անկողինը դատարկ է և սենեակումը մարդ չկայ:

— «Այդ ուր է կորել Յակոբիկ» փընթփընթում էր քթի տակ մայրը, անբաւական կերպով գլուխը շարժելով: «Նա անպատճառ գնացած կը լինի անտառ սկիւռներ որոնելու. չէ, նորան պէտք է աւելի խիստ պահել. այն ժամանակուանից, ինչ որ հայրը գնացել է, Յակոբը բոլորովին փոխուել է և ինձ էլ չի լսում»:

Զմտածելով որդուն փնտրել, նա գնաց տան գործերը հոգալու: Նա աղքատիկ ճաշ պատրաստեց, ճաշի սեղանը սարքեց և մտածում էր թէ, ահա որտեղ որ է Յակոբը կը վերադառնալ. երբէք նա ճաշին ուշացած չէր: — Բայց արդէն ժամը խփեց տասներկուսը, լետոյ մէկը, երկուսը, իսկ Յակոբը դեռ չկար: Մայրն առանց հանաքի սկսեց վախենալ և վազեց հարկանների մօտ իմանալու, թէ արդեօք ոչ ոք չէ տեսել իւր որդուն: Ոչ ոք ոչինչ չգիտէր և միայն մէկ քարտաշ յան-

կարծ լիշեց, որ դեռ արևը չծագած նա հանդիպել է Յակոբին, որը մի տոպրակ շալակած գնում էր շտապ-շտապ:

— «Ա՞յս, դու փախստական» բացական-չեց մայրը, ձեռքերն իրար խփելով: «Գիտէք որ նա հօր համար ինձանից ծածուկ գետնախնձոր է տարել. տեսաք դուք բանը»:

Նա տուն վազեց, սկսեց քընթել Յակոբի պահարանը և տեսաւ որ այնտեղ չկայ նորա տօնական հագուստը և չկայ էլի մի տոպրակ, որ նա մի քանի օր առաջ խնդրել էր իրանից:

— «Ուրեմն ուղիղ է, որ նա գնացել է» ասաց հառաչելով խեղճ կինը և արտասուքի մեծ-մեծ կաթիլները վազեցին նորա աչքերից: «Այս, թէ տղայ է. ինչպիսի բան է մը-տածել. Տէր Աստուած, Դու օգնիր նորան: Երանէ՛ նա յաջող տեղ հասնէր. մինչև անգամ առանց մնաս բարեւ ասելու հեռացաւ ինձանից. այդ արդէն չափազանց է»:

Խեղճ մայրը գառն կերպով լալիս էր և միայն այն միտքը, թէ ինչպէս կուրախանայ հայրը Յակոբին տեսնելիս, մի քիչ նորա ցաւը թեթևացըեց: Տղալին վերադարձնելու ոչ մի միջոց չունենալով, նա հպատակուեց իւր ճակատագրին և միայն խնդրում էր Աստծուն,

որ նա Յակոբին վարձատրէ իւր այդ որդիական սիրոյ համար, նորան առողջ ու անվնաս տեղ հասցնելով։

Մի և նոյն ժամանակ, Յակոբն իւր տօնական շորով, ուրախ-ուրախ առաջ էր գնում դէպի Ռենոս։ Ուղիղ է, ճանապարհը նա գիտէր միայն դպրոցի վարժապետի պատմածով, բայց այդ նորան չէր վախեցնում։ Նա յոյս ունէր, որ անպատճառ կը հասնի իւր նպատակին։ Նա հետը փող չունէր և չէր էլ կարծում, որ ճանապարհին իրան փող հարկաւոր լինի։ «Մարդիկ մի կտոր հաց չեն խընալի քեզ տալ» մտածում էր Յակոբը. «արժէ միայն պատմել, թէ դու շտապում ես հօրդ մօտ և տանում ես նորա համար գետնախընձոր և այդ բաւական է։ Բայց ինչպէս կուրախանալ հայրիկս. այ, քէֆ կըլինի. չէ՞ որ ես մեր մառանի ամենալաւ գետնախնձորիցն եմ ընտրել։»

Եւ յիրաւի, նա տանում էր իւր ուսերի վրայ մի լիքը պարկ և չնայելով որ շոգ օր էր, բայց այդ բեռը նորան ծանր չէր երևում, որովհետև դէպի հայրն ունեցած սէրը կարծես թեթևացնում էր բեռի ծանրութիւնը։

Ճիշդ կէս օրին, երբ մայրը նորան ճաշի էր սպասում, Յակոբը հասաւ մի մեծ գիւղ։

Նա մտաւ մի ինչ որ պանդոկ և համարձակ կերպով նստաւ սեղանի առաջ, երեսից քըրտինքը սրբելով։ Սենեակում կային շատ մարդիկ, որոնց մէջ և մի ծեր զինուոր փայտէ ոտով։ Բոլորը զարմանքով նայեցին այդ տղայի վերայ. յետոյ պանդոկի տէրը մօտեցաւ նորան և հարցրեց թէ, նա ով է, որտեղից է գալիս և ուր է գնում։

— «Ես պատասխանեց տղան. «Ես իրանգենբուրգցի զինուորը Յակոբն եմ և գնում եմ դէպի Ռենոս, հօրս մօտ. Ես տանում եմ նորան մի պարկ գետնախնձոր, որ նա շատ է սիրում»։

— «Ինչ ես ուզում, այ տղայ» հարցրեց այդ ժամանակ ծեր զինուորը, որը վերկենաւով իւր տեղից և մօտենալով Յակոբին, սկսեց նայել նորան ոտից մինչև գլուխ։

— «Ես ուզում եմ գնալ Ռենոս» պատասխանեց զինուոր. Յակոբը։ «Իմ հօրս աւագ զինուորի պաշտօն են տուել, բայց նորա համար այդ միևնույն է, որովհետև նա այնտեղ չի գտնում գետնախնձոր, որ այնքան սիրում է. և ես ահա նորան տանում եմ մեր մառանի ամենալաւ գետնախնձորից. այ, տեսէք, այստեղ տոպրակի մէջ է»։

— «Ա՞խ, դու թեթևամիտ տղայ» բացա-

կանչեց ծեր զինուորն իւր սպիտակ բեղերը  
շփելով. «արդեօք ուղիղ ես ասում. ա-  
պա մէկ անգամ էլ կարգին պատմիր այդ ամ-  
բողջ պատմութիւնը. որ կարելի լինի մի բան  
հասկանալ»:

Զինուոր Յակոբը սկսեց պատմել, իսկ բո-  
լոր ներկայ գտնուողներն ուշադրութեամբ  
լսում էին նորան: Եւ երբ նա վերջացրեց,  
ծեր զինուորի աչքերն արտասուքով լցուեցին  
և միւսներն էլ ծածուկ կերպով սրբում էին  
իրանց թաց աչքերը:

— «Ա՝խ, դու սատանայ կանչեց ծերունի  
զինուորը. «Եկ այստեղ և համբուրիր ինձ. դու  
իսկական զինուորի որդի ես և իմ սիրտս ուրախա-  
նում է, երբ նայում եմ քեզ վերայ. դէհ, եկ»:

Եւ մեր Յակոբը գեռ ուշքի չէր եկել,  
երբ ծերունին մօտեցաւ նորան և սկսեց այն.  
պէս պինդ համբուրել, որ քիչ մնաց Յակոբի  
շունչը կտրուէր. միւսներն էլ հետևեցին նո-  
րա օրինակին և մինչև անգամ հաստափոր  
պանդոկապետը շատ յուզուած ու զգածուած էր:

— «Բերէք այն ամեն տեսակ կերակու-  
րը, ինչ որ կալ պանդոկում»։ ասաց ծեր զի-  
նուորից. «այսպիսի տղային պէտք է իշխանի  
պէս հիւրասիրել. այսօր մենք պէտք է մի  
լաւ քէֆ անենք»։

Հիւրերն էլ նոյնն էին ասում. իսկ  
ծեր զինուորը բոլորովին չէր ուզում Յակո-  
բին բաց թողնել իւր գրկից, մինչև որ նոցա  
երկուսի ձեռքերն էլ պէտք եղան ուտելու  
համար:

Յակոբն ի հարկէ, էլ չէր կարող մտա-  
ծել նոյն օրն իւր ճանապարհը շարունակելու  
մասին: Նորան պահեցին պանդոկում և այն-  
պէս գուրզուրում ու խնամք էին տանում,  
որ կարծես թէ վերաւի մի իշխան լինէր:  
Երեկոյեան աւելի շատ ժողովուրդ հաւաքուեց  
այդ պանդոկում և Յակոբը ծերունի զինուո-  
րի խնդիրքով էլի մէկ անգամ կրկնեց իւր  
պատմութիւնը: Դորանից յետոյ տանտէրը տա-  
րաւ նորան մէկ առանձին սենեակ և քնեցրեց  
տաք ու փափուկ անկողնի մէջ:

Մինչև որ Յակոբը քնած էր անուշ քը-  
նով և երազում տեսնում էր իւր հօրը, ծե-  
րունի զինուորը հօգս էր քաշում նորա ա-  
պագայ վիճակի մասին: — Նա ջերմ ու անկեղծ  
խօսքերով դիմեց այդտեղ ներկայ գտնուող-  
ներին, աշխատելով հասկացնել նոցա, որ ա-  
մօթ կըլինէր այդպիսի լաւ ու պատուական  
տղային ճանապարհ դնել առանց փողի: Եւ  
նոցանից ամեն մէկն ուրախութեամբ բացեց  
իւր քսակը ու այդպիսով քնած Յակոբի հա-

մար հաւաքուեց բաւական գումար։ Տանտէրն առաւ այդ փողը և պահեց իւր պահարանում, մինչև որ միւս առաւօտ զարթնէր պստիկ հերոսը։

Միւս օրը դեռ նոր էր լոյսը բացուել. պանդոկապետը հրամայեց լծել իւր սալակը, զարթեցրեց Յակոբին, լաւ կշացրեց նորան, հաւաքուած փողը կարեց նորա բաճկոնի աստառի մէջ և զանազան բարեմաղթութիւններ անելով ճանապարհ դրեց նորան։ Յակոբը շատ զգածուած էր տեսնելով այդ բարութիւնը և ջերմ շնորհակալութիւններ անելով, մնաս բարև ասաց տանտիրոջն ու ծեր զինուորին, որը մինչև վերջին ըոպէն չէր հեռանում նորանից։ Յետոյ Յակոբը նստաւ սալակն ու գնաց դէպի մօտակայ փոքրիկ քաղաքը. այդտեղ նա բաժանուեց կառապանից, որը պէտք է շուտով տուն վերադառնար. նա շատ բարեներ ուղարկեց պանդոկապետին ու ծեր-զինուորին և ոտով շարունակելով իւր ճանապարհը, իրիկուայ դէմ հասաւ մի ինչ որ գիւղ, որտեղ և գիշերեց։ Այդտեղ էլ նա պատմեց իւր պատմութիւնը, ուր և նորան ընդունեցին շատ սիրով. ամեն մէկն իւր պարտքն էր համարում գովել ու քաջալերել նորան, այնպէս որ Յակոբը քաջութեամբ ու յոյսերով լի

առաջ էր գնում, աւելի և աւելի հեռանալով իւր հալրենիքից։

Վերջապէս երկար թափառելուց յետոյ, նա տեսաւ առաջին պրուսական պահապանին և շտապով ու ուրախութիւնից շնչառպա՛մօտեցաւ նորան։

— Զգիտէք, որտեղ կարելի է գտնել իմ հօրս։ շունչը բռնուելով հարցրեց նա պահապանին։

— «Յիմար տղայ, կոպիտ կերպով պատասխանեց մեծ մօրուքով պահապանը։ «Ես ինչ գիտեմ թէ հօրդ անունն ինչպէս է և կամ նա որ գնդի մէջ է ծառալում»։

— «Նա Բրանդէնբուրգի հեծելազօր գլն. դի մէջ է, նորա անունն է Մարտին Բօլերման և նա աւագ զինուոր է։ արագ-արագ պատասխանեց Յակոբը։

— «Ե՞հ, եթէ այդ ուղիղ է, այն ժամանակ գնաց վինտովիր նորան։ ասաց պահապանը. «Կարող ես անցնել»։

Յակոբը գնաց հեռու, հանդիպեց մի երկրորդ պահապանի, երրորդի և վերջապէս ընկաւ մի ինչ որ թիկնապահի ձեռք, որը սկսեց նորան շատ խիստ հարց ու փորձ անել։ Բայց թիկնապահը քանի աւելի էր լսում Յակոբին, նորա երեսն աւելի ու աւելի էր պայծառա-

նում և վերջ ի վերջոյ նա մինչև անգամ շփեց  
նորա երեսը:

— «Գնանք միասին» ասաց նա. «Ես կար-  
ծեմ մենք շուտով կրգտնենք քո հօրբ»:

Այդ խօսքերով նա տարաւ նորան մի մեծ  
վրան, որի գագաթին ծածանւում էր մի սիրուն  
դրոշակ: Յակոբն առանց վախենալու վազում  
էր նորա ետևից, քաշ տալով իւր գետնախըն-  
ձորը և թիկնապահի հրամանով նա ներս մտաւ:

Վրանում նա տեսաւ արդէն հասակն ա-  
ռած մի զինուորականի, որը ծալուղ աթոռի  
վրայ նստած ուսումնասիրում էր ինչ որ քար-  
տէզներ: Նա մի քիչ վեր նալեց և թիկնա-  
պահի խորին ողջոյնին հաղիւ գլուխը շարժեց:

— «Սա երեխ զօրապետ է». մտածեց Յա-  
կոբը և ամաչելով կանգնեց դրան մէջ: Եւ նա  
չսխալուեց:

Թիկնապահը սկսեց զօրապետին բացա-  
տրել մի ինչ որ բան. նա ուշագրութեամբ  
լսում էր խօսողին և երբեմն երբեմն արագ  
հայեցքներ էր գցում Յակոբի վերայ: Քիչ  
յետոյ նա թիկնապահին տեղ ուղարկեց ինչ  
որ յանձնարարութիւն տալով, իսկ ինքը իւր  
մօտ կանչեց Յակոբին որն իսկոյն մօտեցաւ նո-  
րան և դիք կանգնեց զօրապետի առաջ:

— «Ի՞նչպէս է քո անունը.» հարցլեց նա

զննելով տղային ոտից մինչև գլուխ:  
— «Յակոբ Բոլերման. իսկ մականունս է՝  
զինուոր.Յակոբ»:

Զօրապետը ծիծաղեց:  
— «Դու որտեղացի ես:»  
— «Բրանդէնբուրգի եմ:»  
— «Ինչու ես այստեղ եկել:»  
— «Ես իմ հօրս համար գետնախնձոր եմ  
բերել:»

— «Ուրեմն ուզիղ է. քթի տակն  
ասաց զօրապետը: «Երեխ գետնախնձորն այդ  
պարկի մէջ է, աւելացրեց նա բարձր ձախով:»

— «Այն, մեր մառանում եղած ամենա-  
լաւ գետնախնձորիցն է,» ասաց Յակոբը, ու-  
սերից վար առնելով պարկը և քանդելով նորա  
բերանն ու ցոյց տալով. — Տես պարոն, ամեն  
մէկ գետնախնձորն ինչպէս հարթ, մեծ ու  
կլոր է:»

— «Լաւ, լաւ, որդիս.» ասաց զօրապետը,  
«գետնախնձորն լիրաւի հիանալի է. նորա տես-  
քը մարդու ախորժակ է գրգռում: Բայց հիմայ  
դու գնա՛ վրանի միւս փոքրիկ մասը և նստիր  
այնտեղ, մինչև որ ես քեզ կանչեմ. իմացար.  
իսկ քո տոպըրակը թող այստեղ:»

Զինուոր Յակոբն իւր բեռը թողեց լա-  
տակի վերայ, իսկ ինքը մտաւ վրանի միւս

բաժանմունքը և նստաւ մի մեծ ու լայն բազ-  
կաթոռի մէջ, որը նորան շատ լաւ ու յար-  
մար երևաց:

Երկար ճանապարհից յոգնած և մանա-  
ւանդ այդ վերջին բոլոր յուղմունքներից յե-  
տոյ, նա թմրեց շուտով, իսկ յետոյ արդէն  
խորը քնեց: Այդ դրութեան մէջ գտաւ նո-  
րան զօրապետը, երբ կէս ժամից յետոյ մտաւ  
իւր ննջարանը. նա չուզեց զարթեցնել յոգ-  
նած տղային և կրկին յետ դարձաւ թաթերի  
վրայ:

Մինչև որ Յակոբն հանգիստ քնած էր,  
զօրապետն իրարանցումի մէջ էր, նա հոգս էր  
տանում, որ գտնեն ծերունի աւագ զինուոր  
Մարտին Իօլերմանին, Բրանդէնբուրգի գնդից:  
Նա հրամայեց նորան գալ ընթրիքի, հրաւե-  
րեց էլի մի քանի սպաների և խոհարարին  
անհրաժեշտ պատուէրներ տուեց:

Այն ժամանակներն աւելի վաղ էին ընթ-  
րիք անում, քան այժմ, որովհետեւ առողջու-  
թեան համար վաղ ընթրելն աւելի օգտակար  
էին համարում: Եւ այդպէս շուտով հաւա-  
քուեցին հիւրերը և նստան սեղանի շուրջը:  
Նատերը մեծ զարմանքով նայում էին աւագ-  
զինուորի վերայ և մտածում էին թէ՝ ինչ  
պատճառով արդեօք նա հրաւերուած է զօրա-

պետի ընթրիքին, միւս աւելի բարձր սպաների  
հետ միասին: Բայց ամենից շատ ինքը Բօլէր-  
մանն էր զարմացած այդ պատուի համար.  
թէն նա հետևելով զօրապետի սիրալիր հիւ-  
րասիրութեանը, մեծ ջանքով լցնում էր եր-  
կու թուշն էլ համով կերակուրներով: Նա  
այդ հիւրասիրութեան վերայ նայում էր իբր  
հրամանի վերայ, որին անպայման պէտք էր  
հնազանդել և երեք մարդու չափ ուտում էր:

Բայց այդ ամբողջ ընթրիքի մէջ ամենա-  
նշանաւոր տեղը բռնում էր՝ մի մեծ, ծած-  
կուած ափսէ, որի մէջ հիւրերը կարծում էին  
թէ կալ մի առանձին տեսակ հազուագիւտ  
քաղցրեղէն և շուտ-շուտ ագահ հայեացքներ  
էին գցում այդ ծածկուած ամանի վերայ: Զօ-  
րապետը նկատում էր հիւրերի այդ հայեացք-  
ներն ու հետաքրքրութիւնը, բայց ոչ մի խօս-  
քով դեռ չէր ուզում պարզել այդ ամանի նը.  
շանակութիւնը: Նա ժպտում էր, խորհրդա-  
ւոր կերպով նայելով թէ ծածկուած ափսէի  
և թէ իւր թիկնապահի վերայ. որից նոյնպէս  
ոչինչ չէր կարելի իմանալ: Ամենքի հետա-  
քրքրութիւնն արդէն չափից անցել էր:

Վերջապէս զօրապետն առաջարկեց բա-  
նալ այդ ամանի խուփը և մի վարկեանում  
բոլորի աչքերը խորհրդաւոր ափսէի վերայ էր:

Եւ ինչ տեսան նոքա — հասարակ գետնախնձոր:

Թէև գետնախնձորն ախորժակ բաց անող տեսք ունէր, բայց երես առած սպաներն աւելի լաւ խորտիկների սովոր լինելով, խաբուեցին, կարծելով թէ մի հազուագիւտ բան կար ծածկուած այդ ամանի մէջ։ Եւ միայն Բօլերմանի դէմքն էր փայլում. նա հազիւ կարողացաւ իրան զսպել, որ զարմանքից ու ուրախութիւնից չճշալ։

— «Մինչև հիմայ, պարոններ,» ասաց զօրապետն ուրախ ժպտալով. — «մինչև հիմայ դուք իմ հիւրերս էիք, — իսկ այսուհետեւ, թէ որ կամենում էք անուշ անել այս հիանալի գետնախնձորը, դիմեցէք աւագ-զինուոր Մարտին Բօլերմանին. նա է սորա տէրը»։

Սպաների դէմքերը կնճռուառուեցին և մեծամտութեամբ ուսերը շարժեցին. բայց զօրապետը ոչ մի ուշադրութիւն չդարձրեց նոցա անբաւական լինելու վերալ և շարունակեց։

— «Եթէ դուք միայն գիտենայիք, թէ ինչպէս է հասել այս գետնախնձորը մեր բանակն, այն ժամանակ առանձին պատիւ պէտք է որ Համարէիք, ուտելով գոնէ մէկ հատ այս գետնախնձորից։

— «Ի՞նչպէս, ի՞նչպէս է եղել». հարցնում

էին սպաները. — «Խնդրում ենք, բարի եղէք, պատմեցէք մեզ»։

— «Ե՞ս, ախ, ո՛չ, ես չեմ կարող լաւ պատմել» ասաց զօրապետը. «Բայց որովհետեւ նկատում եմ, որ թէ ձեր և թէ Բօլերմանի հետաքրքրութիւնը շատ մեծ է, այդ պատճառով ձեր ցանկութիւնն ուրիշ կերպ կաշխատեմ կատարել։

—Պարոն թիկնապահ, խնդրեմ բերէք ախտեղ իմ պատմիչիս։

Թիկնապահը գնաց միւս սենեակը և բոլորը նայում էին այն դրանը, որտեղից որ նա ներս մտաւ. Ազնիւ Բօլերմանի սիրտն այնպէս էր բարախում, որ կարծես ուզում էր գուրս պլծնել. նա թոյլ կերպով սկսեց գուշակել և յուզմունքից մէկ կարմրում մէկ գունատում էր, չնկատելով, որ զօրապետի աչքերը լարուած ուշադրութեամբ հետեւում էին իրան։

Մի քանի ըսպէից լետոյ միւս սենեակի դուռը բացուեց և շէմքի վերալ երևաց «զինւոր Յակոբն» իւր ուրախ ու ազնիւ դէմքով։

— «Յակոբ, Յակոբիկս» ասաց Բօլերմանը և մոռանալով կարգապահութիւնը, առաջ վազելով գրկեց իւր փոքրիկին. — «Սիրելի՝ Յակոբս, ի սէր Աստուծոյ, ասա, թէ դու ի՞նչպէս հասար ախտեղ»։

Որդին ոչինչ չեր պատասխանում. շարունակ համբուրում էր հօրը և այդպէս հայրու որդի իրար փարուելով երկար ժամանակ մնացին. Սպաները նայում էին յուզմունքով այդ տեսարանի վերայ, իսկ բարի զօրապետի աչքերում փայլում էին արտասուքի կաթիւները. նա սիրով դիմեց Յակոբին, որը հազիւ բաժանուեց հօրից:

«Ապա, պատմիր տղաս, ինչո՞ւ համար և ի՞նչ կերպ հասար այստեղ: Բայց դեռ լարմար կերպով նստիր այս սեղանի առաջ. մի քաշուիր, քեզ տմօթ չէ նստեցնել մինչև անգամ թագաւորական ճաշին. դէպի հայրդ ունեցածդ սէրը, քեզ այդ բանի համար լիսկատար իրաւունք է տալիս»:

Յակոբն երեխայական սիրով նայեց բարի զօրապետի վերայ, բոնեց իւր հօր ձեռքը, նստաւ նորա հետ միասին ընթրիքի սեղանի առաջ և էլի մէկ անգամ կրկնեց այն բոլորը, ինչ որ մենք արգէն գիտենք: Սպաները մեծ ուշադրութեամբ լսում էին նորան և նորա ամեն մէկ խօսքից յետոյ նոքա աւելի ու աւելի էին հիանում այդ աշխոյժ, գեղեցիկ տըզայի վերայ, որը հօր սիրուց գրդուած, ուզենալով նրան հասցնել իւր սիրած գետնախնձորը, անցել է հարիւրաւոր վերստեր: Իսկ ծերունի

Բօլէրմանն այնպիսի ուրախութեան մէջ էր, որ երբեմն լալիս և երբեմն ծիծաղում էր: Երբ Յակոբը վերջացրեց իւր պատմութիւնը, հայրը բոլորովին մոռանալով իրան շրջապատող ընկերութիւնը, նորից ու տասնեակ անգամ համբուրում էր իւր քաջ տղայի թարմ ու կարմիր այտերն ու շրթունքները և շատ զանազան տեսակ հարցեր էր տալիս նորան ու բոլորի մասին էլ ճիշդ տեղեկութիւններ էր ստանում:

Զօրապետը նշան արեց, որ բոլորը դուրս գնան վրանից և հօրը մենակ թողնեն իւր որդու հետ: Եւ այդպէս, նոքա մենակ մնալով, շարունակ խօսում, ծիծաղում էին և նոցա համբուրներին էլ վերջ չկար: Մէկ ժամից յետոյ միայն ներս մտաւ զօրապետը և աւագ զինւորի մէկ ձեռքում դնելով մի ինչ որ թուզի իսկ միւսում մի մեծ քսոկ լիքը փողով, ասաց՝

— «Այստեղ է ձեր արձակման թուզիթը, որտեղ և նշանակուած է լիովին կենսաթոշակ ստանալու իրաւունք: Իսկ այս քսակի մէջ եղած փողը, որ մենք բոլորս հաւաքեցինք մեր մէջ, ընծայում ենք ձեր ազնիւ որդուն. այս գումարը պահեցէք, մինչև որ նա չափահաս գառնայ: Ուրեմն, հիմայ գուք ազատ էք. գնացէք, ձեր կնոջ ու երեխանե-

ըի մօտ, որոնք անշուշտ չափազանց կ'ուրախանան այսքան երկար ժամանակից յետոյ ձեզ տեսնելով»:

— «Ո՛չ, Աստուած իմ, զօրապետ, դուք շատ ողորմած էք։ ասում էր աւագ՝ զինուուրըն իրան երջանիկ զգալով։ Նա չգիտէր թէ, ո՞ր մէկ բանով ուրախանալ ու հիանալ՝ արդեօք, այդպիսի բարձրաստիճան մարդու բարութեամբ, թէ, իւր արձակման թղթով, կամ թէ Յակոբիկին ընծայուած գանձով։ — Ո՞նչով արդեօք ես արժանի եմ այդպիսի ուշադրութեանև շնորհիլուզուած ձայնով ասում էրնա։

— «Առաջին՝ ձեր լաւ վարք ու բարքով, երկրորդ՝ ձեր վերքով, որ ստացաք վերջին պատերազմի ժամանակ և որն արգելք կը լինի ձեզ այսուհետև էլ շարունակելու ձեր ծառայութիւնը. և վերջապէս ձեր որդի զինուոր-Յակոբով։ Ես նորան տեսնելով, հասկացալ, որ դուք լաւ հայր էք և այդպիսի լաւ հայրերը, մեր թագաւորն ասում է որ, աւելի պէտք են իրանց տներում, քան պատերազմում, որն արդէն վերջանալու վերաբէ։ Այդպէս ուրեմն, գնացէք ձեր հայրենիքը և կրթեցէք ձեր միւս զաւակներին էլ նոյն հոգով, ինչպէս որ Յակոբին. սա իսկական զինուորի որդի է։

Ողջ ու լաջողակ եղէք, սիրելի ընկեր և Յակոբին չմոռանաք տեղաւորել իմ գնդի մէջ, երբ նա մեծանալ և ընդունակ լինի ծառայելու թէ թագաւորին և թէ հայրենիքին»։

Աւագ-զինուորը չափազանց յուզուած, համբուրեց բարի զօրապետի ձեռքը և սըրտանց շնորհակալութիւն արեց նորա բարերարութեան համար։ Զօրապետը շին Յակոբի երեսը և համբուրեց նորա ճակատն ասելով՝

— «Այդպէս բարի ու ազնիւ եղիք միշտ և ժամանակին դու պէտքական մարդ կըդառնաս. ով որ իւր հօրն ու մօրը սիրում, յարգում է, նա այս աշխարհիս երեսին բաղդաւոր կըլինի. մնաս բարև, պատուական տղար»։

Դորանից յետոյ, հայր ու որդի, միւս առաւօտ կանուխ ճանապարհ ընկան դէպի հայրենիք և առողջ ու յաջող վերջապէս հասան իրանց տուն։

Ի՞սկ և իսկ տօն էր, երբ Յակոբը հօրը հետ միասին տուն վերադարձաւ։ Դժուար է նկարագրել բոլոր տնեցոց ուրախութիւնը. — մայրը լալիս էր, երեխաները ժուշկոտում ու փարւում էին հօր վզովը և հօր գործը բաւական ծանրացնում էին. նա չգիտէր թէ, որին գիրկն առնի ու համբուրէ։

Ամենքը գովում էին Յակոբի լաւ վար-

մունքը, իսկ նա կանգնած էր ուրախութիւնից փայլող աչքերով և կարծես բոլորովին չէր զգում, թէ ինչու համար է արժանանում այդքան գովասանքի:

Երբ Յակոբը մեծացաւ, նա հոգով ու սրտով նուիրեց իրան զինուորական ծառայութեան: Նա դառաւ սպայ, շատ պատերազմներում քաջի պէս կռուեց ու քիչ-քիչ մեծ անուն վաստակեց և մինչև օրս էլ, նա ամենից շատ սիրուած ու յարգուած գնդապետ է:



1447

## ՆՈՐ ՄԱՏՏԵՆԱԳԻՐԱՆ

---

1. Խոռվակ, պատմական վէպիկ. Քամալեանց  
Ս. 1894. . . . . — 25
2. Ֆերիզագէի երգը, Փոքր Ասիայի կեանքից,  
թարգմ. Յ. Լալայեանց 1894 . . . . — 25
3. Վարիբ Մշեցի պատկ. տաճկահայ. ներկայ  
կեանքից 1894 . . . . . — 10
4. Հուքալէյ. Տարերը բնական գիտութեանց.  
ժողովրդ. ընթերցանութեան համար գերմ.  
թարգ. Խ. Յարութիւնեանց 1894 . . — 40
5. Վահան Մամիկոնեան Ճաղարբէդեան Յ. 1894 — 40
6. Ալպեան հովիւ, գերմ. թ. Խ. Յարութիւ-  
նեանց 1895 . . . . . — 20
7. Հայրենագութի, գերմ. թարգմ. Խ. Յարու-  
թիւնեանց 1896 . . . . . — 50
8. Գիւղական վարժուչի, Զիամազոլիի, թարգմ.  
Լ. Մելիք-Աղամեանի 1897 . . . . — 25
9. Հոփման. Զինուոր Յակոբ, գերմ. թ. Տիր.  
կոստանեան. 1897 . . . . . — 7



